

պարհը, ճիշդ կեդրոնը կը գտնուէր մարդկային մեծութեամբ պըղընձէ փոքր աշտարակ մը, հոն կը պահուէր ա՛յն նուիրական փոշին, զոր կը բաժնէին ուխտաւորաց և որուն վրայ Քրիստոսի ոտքը կոխած էր: Այս մասունքները բաշխողը՝ արեւմտեան կողմէն բացուած փոքր դռնէ մը այս շէնքը մտնելով կը բաժնէր զանոնք ա՛յն հաւատացելոց, որ իրենց ձեռքը կ'երկարէին փոքր աշտարակին վերեւ բացուածքէն: Նոյն աշտարակին վերեւ, ճախարակեայ դրութեամբ կախուած էր մշտավառ խոշոր լապտեր մը: Սեղանն ալ բացթեայ էր և ունէր միայն փոքրիկ ծածք մը և կը գտնուէր արեւելք: Բրի եկեղեցւոյն վերին մասը, արեւմտեան կողմը, ճիշդ քաղաքին դէմ, ունէր իրարու շատ մօտիկ ութը պատուհան: Այս պատուհաններէն իւրաքանչիւրին յարմարացուած էր մէյ մէկ լապտեր, զորս կը վառէին ամէն գիշեր: Այս ութը լապտերներէն արձակուած լոյսը կը տարածուէր լերան ո՛չ միայն արեւմտեան զառիվայրին և Յովսափատի հովտէն բարձրացող երկար աստիճաններուն, այլ նաև Երուսաղէմի արեւելեան թաղին վրայ: Համբարձման եկեղեցին, ըստ առաջնոյն, կառուցուած էր Զիթենեաց լերան կատարը, կեդրոնէն մինչև լեռն երկարած մեծ սանդուղքին ծայրը:

Բիւզանդական կայսերք չկրցին պաշտպանել Ս. Երկիրը. 638 ին Օմար ամիրապետը խաղաղ կերպով գրաւեց Երուսաղէմը, հակառակ Սոփրոնիոս պատրիարքի ջանքերուն: Օմարի օրով, Ս. Երկրի եկեղեցիներն ու վանքերը անվնաս մնացին: Օմարէն յետոյ, 972 ին Ֆաթիմեանք, 1076 ին Սելճուքեան թուրքեր և 1095 ին Եգիպտական սուլթաններ յաջորդաբար իշխեցին Երուսաղէմի և չըջակայից. բայց դիտել արժան է թէ Օմարի տիրապետութենէն վերջ, քրիստոնէից վիճակը ծանրացաւ, Ս. Տեղեաց պաշտամունքը դժուարացաւ, վնասուեցան ու փախուեցան շատ վանքեր ու եկեղեցիներ, այնպէս որ կեղեքուողներու տրտունջներն ու բողոքները հասան մինչև արեւմուտք, և տեղի ունեցան Սաչախրաց արշաւանքը:

Նոյն եկեղեցիներն ժ. դարուն

Սաչակիրք երբ Երուսաղէմ մտան, նոյն երկու եկեղեցիներն արդէն քաղաքէն դուրս գտնուած եկեղեցիներուն վիճակն ստացած էին, երկուքն ալ գրեթէ քանդուած: